



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 36

ՇԱԲԱԹ

3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒ
Տարեկան 50 Դր.	Տարեկան 54 Դր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռագիր Պեյ խանին Կալ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Նասսիսի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և գիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱՓԱՆԱՆ
ՄԱՍՆԱՆՎԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ.

- (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 և 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱՆԱՏԱՆ

- (1. Սինկեր Խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համալ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԻՏԱՐ

- (2. Գարաքէօյ, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. Վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւղօղլուի տունը:



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՄԵՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՅ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ սննդային մասերն եզան մօին, ուղեղին,
սղեղեղին և փօսթաթիւներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պայիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր
ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգլիոյ, Ճաբոնի և Չինու համ-
բաւուր բժիշկներէն. Չերուպէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'ըզան
ուժաւորութիւնը, դաշտութիւնը, անախորժութիւնը, ստամոքսի խանգարումը, ընդհա-
նուր չղաչիւն սկարութիւնը, նիւարութիւնը, կուրծքի սկարութիւնը, անախորժութիւնը և ին-

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իւր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴՄԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ, Պահճէ-գարու,
Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դե-
ղարաններու և դեղորէից մթերանոցներու քով:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ս 36

ՇԱԲԱԹ

3 Սեպտեմբեր 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական հարց մը (Խմբագրական) : Սփոփանք (Բանաստեղծութիւն) . — ՍՈԿՐԱՏ ՍԱՐԲԱՅԵԱՆ : Ուսանողի յուսատեսքս . — ԵՐ. Մ. ՃԻԻՀԷՐԵԱՆ : Յիր ու ցան խօսքեր . — Ա. ԻՍՊԷՉԱՐԵԱՆ : Արուեստասերի մը յուսերը . — ԱՇԱՏ ՄԱՏԱԹԵԱՆՅ : Աղուոր օղեր . — ՄԻՀՐԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ : Թափառումներ (Պէպեք) . — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ : Իմ փափաքս . — Ս. Հ. ԱԼԱՃԱՃԵԱՆ : Ի՞նչ կ'ըսէ բարեկամուհին . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Կապիկերու աշխարհին մէջ (Հանրագիտակի բերքօճը) . — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

Հիմա որ դպրոցներու վերաբացման ամիսները մօտեցած են , և նոյն իսկ քանի մը կեդրոն վարժարաններ սկսած են բաժնել մուտքի արտօնագիրները , գանձելով նաև երկու դադարի ամսուան թոշակները , չենք գիտեր թէ արդեօք պէ՞տք է մէկ քանի խօսք ընել անոնց անկանոնութեան մասին :

Դրամները կանոնաւորապէս կը վճարուին , կը գանձուին , բայց թերու-թիւնները և անկարգութիւնները միշտ և յաւէտ կը մնան այդ կրթական յար-կերուն մէջ , որոնց շուրջ պէտք է վառնուի ամէնէն աջալուրջ կարգապահու-թիւնը և հսկողութիւնը :

Ամէնէն առաջ դասաւանդութեանց անկանոնութիւնը պէտք է չեչտենք հոս , և յուշենք անոնց , որոնք ակնոցով իսկ չեն տեսներ ու ականջով չեն լսեր . դանդաղ իրենց դեռահաս և չափահաս դպրոցականներուն , դասաւան-դութեանց անկարգութեան , անկանոնութեան և անկարգապահութեան մասին :

Բերայի կեդրոն վարժարանի մը աղջկանց բաժնին մէջ ջութակի սկզբնաւո-

լուծիւնը ուրախութեամբ արձագանգուեցաւ բոլոր օրաթերթերու և պարբերականներու մէջ : Ամէն ոք իր գիտցածէն բաներ մը որոճաց՝ այդ սկզբնաւորութեան գէշ կամ աղէկ հետեւանքը պարզելով կրթասէր հանրութեան առջև : Զատագովողներ եղան այս ձեռնարկը : Ամէն անհատ ինքնիրեն քաջքնեց , քննադատեց , գովեց կամ բամբասեց սրճարանի մը անկիւնը , քանի մը հաստ գլուխ բանգէտներու ! քով՝ հեղինակը այդ սկզբնաւորութեան, սակայն միշտ առանց ծանրանալու ուրիշ կարգ մը աւելի՛ կարեւոր և գուցէ պիտանի հարցերու , դասաւանդութեանց ճշգրտորէն տրուելուն առթիւ :

Մեր լսածին , տեսածին և գիտցածին նայելով , ջութակի դասաւանդութիւնը ասկէ առաջ չորեքշաբթի և ուրբաթ օրերը տեղի կ'ունենային , ցերեկէ վերջ , ժամ մը միայն , և 10-12 աշակերտուհիներու կ'աւանդուէր այդ գուցէ չուտըմբռնելի ! ուսումը , որ իր մէջ գեղարուեստական ամէնէն նուրբ ու բազմազան դժուարութիւնները ունի :

Եւ ասոր փոխարէն գիտէ՞ք ինչ կը վճարեն ուսանողուհիները , վերջապէս ամսական համեստ գումար մը , որուն հաւաքոյթէն ջութակահարին վճարուելէ վերջ՝ ամսական կլորիկ գումար մըն ալ կը մնայ ի շահ կրթական անտուկին :

Աս աւերորդ և մանաւանդ անպէտ ուսումը պարզապէս երեւութաբանութեան մը տակ ծածկուած կեղծաւորութիւն մը ըլլալէ ուրիշ բան չկրնար կոչուիլ , քանի որ մինչև այսօր , բոլոր ջութակի հետեւող ուսանողուհիները՝ անպիշտօր կամ 80-85իցը հնչեցնել , բռնել չգիտնալէ վատ , չեն գիտեր նաեւ աղելը ուղիղ ու պատշաճօրէն բռնել : Կարճ և կցկտուր դասաւանդութենէ մը ասկէ աւելի արդիւնք ալ չսպասուիր չիտակը :

Այսու հանգերձ ըսել չենք ուզեր թէ ջութակահար ուսուցիչը զլացած է սովորեցնել պէտք եղածին պէս , կամ մեթոտները տկար են և ապիկար , այլ ինդիլին էութիւնը՝ սահմանուած ժամանակին անբաւականութեան վրայ կը կայանայ :

Կը հասկնանք մէկ ժամ դասաւանդութիւն ջութակի , երբ մէկ հոգի է ուսանողը , սակայն երբ մէկէ աւելի բազում անդամներէ բաղկանայ ան , այն ժամանակ կցկտուր և անհիմն կ'ըլլան ամէն ջանք ու խնամք : Մանաւանդ հոս պէտք է յիշենք թէ՛ շատ անգամ աշակերտուհիներ մէկ դասէն միւսը կը մոռնան իրենց նախկին սերտողութիւնները :

Եթէ այդ սահմանափակ միջոցին՝ իւրաքանչիւր ուսանողի երկուքական անգամ աղելը հնչեցնել տրուի , ահա՛ ժամանակը կուգայ կը լրանայ : Այս պարագան է նկատելին :

Մանկնակ ու դեռահաս գլուխը բոլորովին կը խանգարի այս տեսակ խառնիճաղանճութեանց մէջ , որով բան մը չսովորելէ վատ , գիտցածն ալ կը մոռնայ անշուշտ :

Ուրեմն պէտք է համոզուինք թէ՛ կա՛մ հիմնովին վերցնելու է այդ տեսակ անպէտ ու ապիկար դասաւանդութիւնները մեր կրթական յարկերուն խնդրուած ու խառն ի խուռն սրահներուն մէջէն , կա՛մ պէտք է զանոնք , ամէնքն ալ՝


կանոնաւորութեան մէջ դնել, զերծ պահելու համար մեր մանկտիքը և ներկայ ու ապագայ սերունդը տգիտութեան ճիրաններէն:

Ատոնք, այդ կարգ մը դրամները գանձողները, որոնք լաւ գիտեն մասնաւոր դասերու համար տարբեր և բացէն ամսականներ գանձելու ձեւը, թող խղճահարութիւնը ունենան գոնէ ուշադրութիւն ընելու և հոգ տանելու քաւանդաւոր դասերուն կանոնաւորութեան, որոնց չար հետեւանքը ամբողջ հանրութեան մը կը դպի:

Մենք մօտէն գիտենք խնդիրին էութիւնը և չենք ուղեր բոլորովին ծանրանալ անոնց վրայ, որոնք պատճառ եղած են այս անկանոնութեանց:

Արդէն իսկ հանրութիւնը համոզուած է թէ՛ այդ ջութակի դասաւանդութիւնը, բոլորովին անհիմն է և ապարդիւն, և ամսականները կը վճարեն իրենց աղջկանց քմահաճոյքին համար լիկ:

Ուրեմն յայտնի է թէ ինչո՞ւ օրէ օր կը նուաղին մեր ապագայ ջութակահար օրիւրդները այդ սրահէն, այդ դասարանէն:



Քեզի՛ կուրծքս, սի՛րսս ալ, հոգի՛ս ալ քեզի,
Չքնադագե՛ղ Քամելիաս,
Լոյծ աչքերէս վեհերու ցող բող հոսի՛
Թերթերուդ մօտ ձիւնամաս:

Եկո՛ւր, ժուռ գանգ շիրմիս օուրջը քեզի հետ,
Նոնիներուն ամպին տակ,
Հետքդ մաշինք, ծիւրինք, հաճինք առ յաւեհ,
Իբրեւ զոյգ մը հրեհեհակ:

Այսերուս տակ, կուրծքիս վրայ հանգչի՛ բող,
Նրբին լանջքդ սրտիս մօտ,
Տերեւներդ օրունկներէս խուսափող,
Գգուեն սիրքս հիւանդոտ:

Լո՛ւռ պրտքսի՛նք, քափառայած, մոլորած,
Զիս գինովցո՛ւր քու բոյրով,
Թող զգլխի՛մ, քեզ երազեմ աչքս բաց,
Թող մոյեզնիմ հոգեխռով:

Մութ սուրբներ բող մեզ պատեն անընդհատ,
Ուր ձիւն այսերդ ես օյեմ,
Դաղսագողի համբուրեմ քեզ անվրհաս,
Տղու մը պէս անխոհեմ:

Իմ յոյզերս, վրդովներս, հե՛զ ծաղիկ,
Քեզ փոխանցեմ, զանոնք ա՛ն,
Դաղսնի պահե՛, քերթերուդ տակ անուշիկ
Անուրջներով դալկահար:

Այլ քու տեսքդ երբոր բռնմի, Քա՛մելիաս,
Նրբ ցողերով սիրակեզ
Թրջին այսերդ, եւ խորոմիս վաղահաս,
Յանժամ դու զիս կը փնտռես:

ՍՈՎԵՏԱՏ ՍԱՐԲԱՅԵԱՆ



ՈՒՍԱՆՈՂԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ

(ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԿԵԱՆՔԷՆ)

Ան Բինկեանէն՝ իսկ ես Տրապիզոնէն մեր սիրտերուն մէջ վառող ուսման սէրը բերած նետած էր մեզ Պրուսա, մեր ծննդավայրէն հարիւրաւոր մղոններ հեռաւոր հորիզոնի մը մէջ :

Հեռու վարժարանի մը մէջ, մանաւանդ, մյուսոյն հոսանքէն մղուած ուսանողի սիրտերը բան մը ունին զիրար քաշող. միակ օր մը կը բաւէ որ այդ երէկի անծանօթները սերտ բարեկամներ ըլլան իրարու :

Ընթերցատան մէջ ճանչցայ Վահանը, ուր կ'երթայինք միշտ դպրոցական օրերու տաղտուկը խեղդելու օրուան թերթերուն ընթերցումին մէջ : Հակառակ գաւառներու խորերէն ըլլալուն՝ զարգացած ու գրասէր պատանի մըն էր : Համակրեցայ իրեն : Տարեկիցի ու գաղափարակիցի կրկնակ հանգամանքներով զօղուած, մեր դպրոցականի դառնութիւնները զգալապէս թեթեւցած կը զգայինք :

Դիտնայիք, ինչ քաղցր բան մըն է սրբտակից մը ունենալ նոր յաճախած վարժարանի մը մէջ, ուր մարդկային ահագին կոյտին մէջ, լերան մը դագաթին վրայ մոլորած հովիւի մը չափ միայնակ կը զգաս ինքզինքդ. հաղարաւոր դէմքերու մէջ չես հանդիպիր մէկ հատի մը որ ժպիտ մը ունենայ քեզի համար, չես գտներ միակ սիրտ մը, որ բան մը ունենայ քու սիրտիդ հետ խօսող :

Այլ չատ քիչ անգամներ միայն պատահութիւնը կ'ունենայինք տեսնուելու : Ան սկսած էր հետեւիլ չերամաքութեան դասընթացքներուն, ես ալ մտած էի երկրագործական վարժարանը, որ քաղաքէն բաւական մը հեռու ըլլալով ամէն շաբաթ կանոնաւորաբար չէինք կրնար Պրուսա ելլել : Տասնը հինգ օրուան միջոցէ մը վերջ նորէն տեսայ զինք ընթերցատունը, որ ժամադրավայրն ու միակ զբօսատեղին էր ուսանողներու համար : Տփոյն էր ու նիհարցած :

— Վահան, ինչ ունիս, ուրտեղդ կը ցաւի :

— Բան մը չէ, կ'անցնի : Ժամանակաւոր տկարութիւն մըն է լոկ :

Յաջորդ շաբաթուան ժամագրութեան չէր գտնուած :

— Տկարութիւնը սաստկացաւ, ըսին, ու խոհեմութիւն սեպեցինք հիւանդանոց փոխադրել :

Կէս ժամ վերջ ներս կը մտնէի հիւանդանոցի սրահէն : Զիս տեսնելուն անզօր ճիգեր ըրաւ անկողինին մէջ նստելու. հարուածը ուժգին էր : Այտերէն ցնդեր էին երիտասարդութիւնը յատկանշող վառ կարմիր երանգները : Յաւը ընկճած էր զինք. աչքերուն մէջ յուսահատութիւն մը կը կարդացուէր :

— Դպրոցին մէջ ամս պիտի ըլլար իմ ճակատագիրս :

Ու տեսայ որ արցունքի երկու այրող կաթիլներ լոկի սահեցան տփոյն այտերէն վար : Սիրտս կը բարախէր, կը ճնշուէր, բաւ մը չէի գտներ պատասխանելու, ամեն չափ յուզուեցայ : Զգացի որ եթէ տակաւին հող մնայի՝ անկարող պիտի ըլլայի արցունքներս զսպել, ու զբօսանքի գիրք մը դնելով բարձին վրայ, մեկնեցայ յաջորդ շաբաթու նորէն այցելելու խոստումով :

Շաբաթ մը վերջ երբ ներս կը մտնէի հիւանդանոցի սրահէն, ըսին թէ մասնաւոր սենեակ մը փոխադրուած էր : Դեղերու բարկ հոտ մը ունեւորեալ ասղնտեց, բարեւիս չպատասխանեց. երկու օրէ ի վեր ուշակորոյս վիճակի մը մէջ կը գտնուէր :

Մօտեցայ և սեղմեցի ձեռքը, ու զգացի սիրտիս մէջ ամբողջ ցաւերը, ամբողջ սարսուռները. հոգիէն ելեկտրական հոսանք մը կարծես անցաւ մարմինիս, ամբողջութեամբ ցնցելով զիս : Զերմութեան վառարան մը դարձած էր : Անկապակից հառաչներ միայն կը թռէին հիւանդի շրթունքներէն : Մօտալուտ վախճանի մը արհաւիրքը կար իր դէմքին վրայ : Ինչ տխուր բաղդ, ո՛վ Աստուած, որ կը հալածէ տասներութը տարու դպրոցական պատանին :

Ահ, ակամայ մտածեցի թէ այդ մահամերձ աղան ծերուկ մայրիկ մը ու քուրիկներ ունէր, որոնք իր փայլուն վերնագարձին

կը սպասէին . . . Մտածեցի թէ արդէն իր թշուառ մայրը կաթուածահար պիտի ըլլայ, իր մէկ հատիկ մանչ զաւկին մահուան գոյժը առնելով : Մտածեցի թէ ես ալ հեռաւոր դպրոցական մըն էի իրեն պէս, և ո՛վ կրնար ապահովել զիս թէ օր մը նոյն բազմը չվիճակէր ինծի ալ . . . ու ցնցող սարսուռ մը քալեց երակներուս մէջ :

Այս անգամ քանի մը կաթիլներ թափեցան աչքերէս, կաթիլներ, որոնք սիրտէս, հոգիէս կը բլխէին :

Մեկնելէ առաջ սօքթօնին սենեակը դացի, հասկնալու համար թէ ո՛րչափ կարելի էր յուսալ, պատասխանը շատ յուսալից չէր . . . :

Երկու օր վերջ մահուան լուրը հասաւ մեզի : Պարզուկ յուղարկաւորութիւն մը ըլինք, քահանայ մը, քանի մը դպիր, չեղամարտական և երկրագործական վարժարաններու ուսանողներս միայն կ'ընկերանայինք դադաղին : Թաղեցինք դայն : Թէ և մէկը չունեցաւ իր սիրելիներէն, բայց ճշմարիտ ցաւ մըն էր մեր զգացածը, ու մեր դէմքերուն վրայ կը կարդացուէր եղբօր մը մահուան առթած դառնութիւնը :

Երեք ամիս վերջ, երբ անակնկալ հով մը զիս հեռունները պիտի տանէր Պրուսայէն ա՛լ չվերադառնալու համար, մեկնումէս օր մը առաջ այցելեցի հողակոյտին, ծնրադրած աղօթեցի վահանին հոգիին համար ու ծաղկեպսակ մը անցուցի փայտէ խաչին վրայ : Յաջորդ օրը, երբ չոգեկառքը հասանքի մը նման անողորմաբար կը քչէր զիս դէպի Մարմարայի ափերը, զգացի որ սրտէս մաս մը մնաց հո՛ն, Ողիմպոսի ստորոտը, ուր անշուք դամբանի մը տակ կը հանգչի ոսկերոտիքը իմ տարաբաղդ սրտակիցիս, որուն յիշատակը յաւէտ պիտի մնայ սիրտիս մէջ, ուսանողի անմոռանալի յիշատակներուն հետ սերտօրէն կապուած :

Տրապիզոն

ՆՐ. Մ. ՃԻՒՀԻՐԵԱՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

Ե. ԹՈՒԼԱԵԱՆ

ԵԻ

ԱՄԷՆ ՇԱԲՈՒ

ՑԻՐ ՈՒ ՑԱՆ ԽՕՍՔԵՐ

ՆԱՅՈՒԱԾՔ — Հոգւոյն հայելին, որ սրտերու խորը կը քափանցէ ակնթարթի մը մէջ :

ՀՄԱՅՔ — Անբիծ կոյսերուն դիւքանքն ու թովչութիւնը :

ՊԶՐԱՆՔ — Կարգ մը օրհորդներուն, ըստ իրենց, առիճնող մէկ ճեմք, որ որչափ ուզեն անոր մէջ չափազանցել, այնչափ զրգուանք կը պատճառեն իրենց դիմացիներին : (Բաղաւաբար ես կ'ախորժիմ ասկէ Ծ. Խ.) :

ԵՐԳ — Սրտին աղաղակը, որ հոգեկան վիճակը կը բացատրէ ենթակային : (Շատ մի պոռար Ծ. Խ.) :

ԴԱՇՆԱԿ — Վայրկենական դեղ սրտի պոռքկումին, ո՞ր կը փառասէ յոյգերը :

ԼՐԱԳԻՐ — Ժողովուրդին Սաղմոսը. Պոսեցիները այդ քաղուածքը շոգեմաւին ու շոգեկառքին մէջ կ'ընեն :

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ — Զարգացած դասակարգին հոգեմասնիկը : (Եւ կամ օրլսխնիներու արօտալայր Ծ. Խ.) :

ԿԻՍԱՄՍԵԱՅ — Մարդկութեան հոգեմտորոգ շարակումը, կրօնասէր եղողները ասով կը հետաքրքրուին :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Լրագրին Crème . — Շաբաթաթերթին պաղպաղակը . — Կիսամսեային զովացուցիչ liqueur, իսկ ամսաթերթին անուշապուրն է, շատ գորաւոր սաւմոս պէտք է ասոնց ամենը մէկէն կարենալ հաւակելու համար :

ՅՕԴՈՒԱԾ — Լրագրին համադամն է . — Շաբաթաթերթին ծաղը . — Կիսամսեային հրուակը, իսկ ամսաթերթին կաթնապուրն է . ամենքն ալ կը յարմարին նրբաճաշկ սաւմոս ունեցող ընթերցող եւ ունիներու, երբ զարգացած դասակարգէն են եւ օր ըստ օր յառաջդիմութեան քայլ մը առնելու անգուսպ փափաք ունին :

Ա. ԻՍՊԵՉԱՐԵԱՆ



ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ

Այն ատեն անչափահաս էի աակաւին՝ ո'չ մէկ ամպ կրցած էր սքողել տասնըւնեց տարիներուս առուգաբեր ճառագայթը . ո'չ մէկ դառն շունչ եկած էր սառիլ լուսախիտ սիրտիս զուարթունակ նշոյլներուն վրայէն, անհոգ ու անմուայ կ'անցնէին կեանքիս օրերը՝ չէն ու շող, անխորհուրդ և անվաստակ :

Հայրական գգուանքներէ չա'տ հեռի՝ մօրս ու մեծ հայրիկիս գուրգուրանքները և խնամքները միայն շուրջառած էին մատաղատի էութիւնս, որով տղայ, անգէտ հոգիս չճանչցաւ աշխարհային ո'չ մէկ տառապանք, մարդկային ո'չ մէկ զրկանք :

Միտքս չէր յառած ո'չ մէկ ասպարէզի՝ որ աղագայի զբաղումս ու բարեկեցութիւնըս պիտի ապահովէր : Ծատեր կը հարցնէին ընտրութիւնս՝ սակայն ես անձայն կը մնայի, կը լռէի : Արհեստներ կը թուէին, ասպարէզներ կը շարայարէին՝ բայց ես ատոնցմէ ոչ մէկին կը հաւանէի, ատոնց մէջ ոչինչ կը գտնէի իսկապէս մեծ, ոչինչ էապէս վսեմ : Երեւակայութեանս մէջ բան մը կար որ զիս կը զբաղեցնէր, սիրտիս խորը անճանաչ զգացում մը կեանք առած էր՝ որ հոգիս կը տանջէր, սակայն ինչ էր այդ՝ որ էութեանս մէջ գոյութիւն ունէր և որ ինծի անծանօթ էր ու անհասկնալի : Կըզգայի, կ'ըմբռնէի թէ՛ ինչ որ ալ ըլլար ան, զիս շատ պիտի տառապեցնէր, չա'տ պիտի լացնէր, ճիշդ ան մարդերուն պէս՝ որոնք նախազգացումը կ'ունենան չարիքի մը մօտաւորութեանը, զոր չեն ճանչնար :

Փաստաբանութիւն, բժշկութիւն, վաճառականութիւն, արհեստագործութիւն և տակաւին շատ մը բաներ, բազում գործեր՝ որոնց իրաւ է որ լաւապէս տեղեակ ու ծանօթ չէի անոնց իւրաքանչիւրին յատկութիւններուն, սակայն և այնպէս չեմ գիտեր ինչո՞ւ մասնաւոր հրապոյր մը չունէին անոնք ինծի համար, ինչո՞ւ խիստ պարզ, անհունօրէն անմիջելի կը թուէին ինծի այդ սահմանաւոր ասպարէզները :

Երեւակայութիւնս թուի մը ունէր՝ որուն սաւառնելու համար անհունութիւններ հարկ էր, բոլ մըն էր սիրտս յոյզերու՝ որուն համար ամբողջ մարդկութիւն մը անհրաժեշտ էր՝ զոր զգար : Բանի՛ ունայն կ'անցնի կեանքը այն մարդուն՝ որ միայն մէկ զգացումով և մէկ մտածումով կ'ապրի : Զէ՛, ես ատանկ անյոյզ ու անփոյթ չէի կրնար ապրիլ, այդ սառնային կեանքը ինձ մէ իսպառ հեռու պիտի մնար : Ես կեանք մը ունենալու էի որով կարենայի բովանդակ մարդկութիւնը միանգամայն ապրիլ, բոլոր զգացումները համանգամայն զգալ :

Այսպէս կը խորհէր ահա՛ անմարդ միտքս, ու այսպէս կըզգար ջինջ ու բազմայոյզ սիրտս :

Անզգայ մը չէի և ո'չ ալ ինքնասէր մը, բայց և այնպէս՝ հակառակ տարիքիս պահանջումին՝ մարդերու վրայ սէր չունէի : Նոյնքան հոգեկան թէ մտաւորական վերաբերում մը ունէի մօրս կամ բարեկամիս՝ ո'րքան քարի կտորի մը նկատումով : Ու այսօր դարձեալ պինդ կը մնամ այդ գաղափարին ու այդ զգացումին վրայ՝ երբ յիշած անստուեր օրերս ինը տարիներու բազմագունակ քօղի մը ներքեւ ծածկուած կը մնան :

Ժամանակ եղած էր որ, երկար ժամեր, լուին ինքնամոփոփման ու անվրդով միայնութեան մէջ խորհած եմ ու ջանացած վերլուծել այդ գաղտնիքը՝ զոր մէջս կը մնուցանէի և զոր նոյն իսկ ես չէի ճանչնար : Ծատ անգամներ պարզած էի այս անորոշ վիճակս, այս հոգեկան առեղծուածս Պերճուհիին : Մեկնութիւն մը կը յուսայի ստանալ այդ սպիտակ ու անարատ հոգիէն, բայց ա'ն ալ չէր կրնար բացատրել սրտային այս անըմբռնելի կացութիւնս . պիշ պիշ աչքերուս կը նայէր ու անխօս կը մնար :

Պերճուհին սիրտիս ամէնէն աւելի մօտիկ եղող մարդուհին էր : Զեմ յիշեր մէկը զոր անոր չափ սիրած ըլլամ և յարգած : Մեր մանկութենէն միապիս էինք մեծցած ու զըրեթէ տարեկից էինք : Օր մը զինքը չտեսնել՝ օր մը չապրիլ կը նշանակէր ինծի համար : Բո'յր էի կոչած՝ ու ես անոր եղբայրն էի : Իրինկունքը ժամը 12ին տունս պէտք էի ըլլալ՝ իսկ ցորեկները վարժարանը : Կիրակին տունին մէջ կ'անցնէինք :

Իրերու այս դրութեան մէջ՝ գիշեր մը ընտանիքով թատերական ներկայացումի մը հրաւիրուած էինք : Ներկայ գտնուեցանք , ես ալ միատեղ էի : Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ թատրոն կը մտնէի : Ծրագրերուն յորդառատ լոյսը , դափնիներուն միօրինակ թոյրը և գրգռող բոյրը , հետզհետէ խռնուող բազմութեան հաճելի ու թեթեւ ժրխորը , դրօշներուն քմայքոտ ծալքերը , վերջապէս այդ մթնոլորտին մէջ ամէն բան , ամէն բան քաղցրիկ դող մը կը պտըտցնէին երակներուս մէջ :

Ձանգակի սուր ձայնէ մը յետոյ , — որ խաղին սկզբնաւորութիւնը կը յայտարարէր — երբ վարագոյրը վեր կը սաւառնէր վեհապանծ ու կանոնաւոր ծալքերով , չեմ գիտեր տղայական ի՞նչ մտախոհութիւնով , ի՞նչ զգացումով մը կանգնեցայ ու խորին երկնզածութիւնով խաչակնքեցի դէմքս . ապագայ ասպարէզիս սեփն վրայ՝ անբարբառ ու բնազդական ո՛ւխտս էր արդեօք որ կը կատարէի . . . :

Վարագոյրը երբ կ'իջնար՝ անհուն խանդավառութեան և զղրդեցնող ծափահարութիւններու մէջ՝ ձեռքերս օդին մէջ իրարու կը զարնուէին անգիտակից շարժումներով : Հանուրին գնահատումը ա՛յնքան վառվռուն էր ու սրտազեղ , սիրտս ա՛յն աստիճան տարապայման կերպով ուռեցած էր յուզումէն , և հոգիիս խայտանքը ա՛յնպէս անսահմանելի որ՝ ա՛լ աչքերս ազատ անց տուին արցունքներուս՝ որոնք էութեանս անլոյս խորերէն կուգային :

Ա՛լ զգացումներուս ճանաչողութիւնը ունէի . երեւակայութիւնս իրականացած էր . հիմա գիտէի ասպարէզս՝ որ վշտանոծ ու հրայրքոտ ուղին պիտի ըլլար դէպի անփառունակ գերեզմանափոս :

Իր ախտին գիտակցութիւնը ունեցող հիւանդի մը անձկութիւններուն ենթարկուած էի ալ :

Եւ սակայն մեծ մարդ մը պիտի ըլլայի՝
(Յաջորդ թիւով)

ԱՅՈՏ ՄԱՍԹԵԱՆՑ



ՄՐՏԻ ԷՋԵՐ

ԱՂՈՐՈՔ ՕՊԵՐ

Նրբոյցներէ լուսանիւթ ,
Երկինքին մէջ ասմազուն ,
Հեօսանքներ մը կի՛ւս , անցի՛ւր ,
Կը շարմաղուին խօ՛լ , յուզո՛ւն :

Երկինքին ցալ ասմազուն ,
Զըմրուիս մարգերուն վրան ,
Թե՛ կեցողանի , թե՛ ասուն՝
Ուրուներով կը թրվաւն :

Հեօսանքներով կի՛ւս , անցի՛ւր ,
Լեռնէն , դաօսէն ու ձորէն ,
Լոյս հոսանքներ հոսանուս՝
Սիրտէն ներս կը ծորեն :

Կը շարմաղուին միօս յուզուն ,
Կո՛յս ժրպիսներ՝ Անեղին
Թարբիչներէն սիրասուն ,
Ուրկէ յո՛յս , լո՛յս կը բրդիսին :

Սեբասիա

ՄԻՀՐԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ



ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱ՛Ք

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՑԵԼՆԼՈՒ

“ՀԷՐՃԱՑԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՍ ՇՈՒԿԱՅ, ԳՈԼՅՈՒՄԸՆԼԱՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի ,
ճերմակեղէնի , ֆանքեզիի , աղամանդի , ժա-
մացոյցներու , շոքայներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԳԻՏԷՔ ԻՆՁ ՊԱՅՄԱՆԱԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքներու % 20-ը կանխիկ ,
մնացեալը շաբաթական % 5 զրոյ վճարելով՝
կանխիկ գնողին % 5 զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծա-
նուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն
թէ՛ մօտ ատենէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդիւ :

ԲԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Պ Է Պ Է Ք

Շաբաթը մէկ օր կիրակի, և այդ կիրակիներուն ալ երեկոյեան, տասնէն մինչև կէս՝ ժամանցի միակ զբօսարան պարտէզ մը ունի Պէպէք, ուր կը դիմեն Բերայի և շրջակայներու բոլորները, քուսէլի պէպէքները, որոնց բերանէն մամա, բաբա չես լսեր երբէք:

Մովեղրին մօտ բաւական ընդարձակ դետին մըն է Պէպէքի պարտէզը, ծառերով գոցուած և ծաղիկներով զարդարուն:

Այս պարտէզը անուանի է աղջիկտեսի համար: Հայ-լայֆ աղջիկտեսները հոս այս առիթով պարտէզին մէջ տեղի կունենան, աղջիկը քուքով կուգայ, մագերուն թուալէթը չ'աւրուելու համար, իսկ տղան նաւակով: Բայց պէտք է ըսել որ, ընդհանրապէս այս տեսակ Ֆամիլիէն, ձեւակերպութիւնները չաթու մէջ կըլլան, երբ արժողները պարապ, սեղանները թափուր և քաղինոճին ալ յաճախորդի չգոյութենէն կուգայ խուտուռ խուտուռ . . . :

Օգտափոխութիւնը որչափ մարմնաւոր առողջութեան նպաստաւոր, նոյնչափ և քիչ մընալ աւելի քսակի աննպաստ ըլլալը գիտցող և թէքքողի ջուրովը գոհացող անցեալ ընդունելութեան հարուստ և ներկայ ընդունելութեան իւղովը տապկուող օւթալայֆ դասակարգէն ընտանիքներն են այս պարտէզին կիրակնօրեայ տէմիրպաշ յաճախորդները, որոնք՝

Կառքի ծախք	30
Ըմպելիք եւայլն	15
Պատրաստ սիկառ և ճէվիզ իչի	5
Գումար	50

աչքերնին առած դուրս կիյնան, զբօսանքէ աւելի «մարդու մէջ երեւնալու» գաղափարով:

Եւ որովհետեւ էքօնօմին և զայն պատշաճօրէն գործածողը քաշքելը մահացու մեղքերէն մին է, ուստի անցնինք նկարագրել անցեալ կիրակիի Պէպէքը:

Փամը տասն էր, երբ մեր մակոյկը փոր

փորի մօտեցաւ տէպառքատէռին, մինչ միւշիքը քուսով վալսը կը զարնէր հեշտօրօր:

Մակոյկը բռնողին քսան պլիկ բռնու պոռտալով սկսաւ մեր ծախքը, և պէտք է ըսել որ ատոր մէջ ձեռքըյմեկութիւն մը, կուսնտիօզ մը կար: Կոկիկ բազմութիւն մը, որուն ամբողջութիւնը Հօմ քօլէճի վկայականաց բաշխման հանդէսը յիշեցուց ինծի: Ծէպ ճերմակ թուալէթ մը, կօշիկներէն մինչև գլխարկները: Չեմ գիտեր թէ այս տարի բժշկները քանի Քոնտիֆօնսիէ տարին պահիկ ընել տալ պանքաները, այս ճերմակ թուալէթներու երեսէն, քանի որ աղէկ դետեմ՝ հագնողները անպատճառ մէկ երկու անգամ սուլոս սաքլճանէն պառկեցան:

Չեմ գիտեր թէ այդ օրը դէմքիս կամ մարմնոյս վրայ ինչ արտառոց բան մը կար: Պարտէզէն մուտքս հրաշալի եղաւ, ու բոլոր ներկաները սկսան քօտաքի պէս ուղղակի վրաս ձգել նայուածքնին: Կարմրեցայ, ճերմկեցայ, վերջապէս մօտի ալ չալեցի, մինչև որ պարապ աթոռ մը գտնելով շնթեկեցայ, առանց համարձակելու ինքզինքս քննութենէ մը անցնելով հաստատելու թէ, իրօք բան մը կար վրաս դիտողութեան արժանի:

Ե՛ւ, եվոքրա՛ . . . : Շամբանէս պօթչեմ հագած եղեմ . . . : Հեմ գիտեր թէ այս մեղքիս տաներէց տէրպապաս Արթ. Տէր Կարապետ քահանան թողութիւն կուտայ. . . : Բայց ամէն պարագայի մէջ պէտք է խօստովանիմ թէ, կօշիկներուս վրայ ոչ թէ պատուհան՝ այլ լուսանցք մը անգամ չիկար, ուստի խալթ ուտել կիյնար կարգ մը հօբպիլիպիմպօմներու, որոնք դեռ կը շարունակէին զիս սիւզմիւշ ընել բօթուգալ շոռոռալիի պէս:

Մինչ այս մինչ այն, ես սկսայ ըստ սովորականին արհեստս ի գործ դնել: Ուստի, ոտքէս առաջ աչքս սկսայ գործածել՝ հոս հոն դիտելով, որպէս զի լաւ ըմբռնեմ Պէպէքի պարտէզը իր միջուկովը:

Ախ . . . ուր էին Գում-գաբուցի, Սամաթիացի, Սկիւտարցի իմ ճալանուկներս, որոնց մօտ սլքակալով մեղուի պէս նիւթ ու հիւթ կը քաղէի: Բոլոր նստող տիկիները, Յունարէն և Գաղիերէն կը խօսէին, և որոնցմէ հայ ելլալու յոյս չի կար ինձ համար,

և այս էր պատճառ որ աչքս անօթի, ականջըս թափուր մնաց :

Հոր՝ Պէպէքի պարտէզին մէջ տեսայ :

1. Հօթ նուօթի թուալէթներ , որոնք Բերացի մօտիւթներու ճարտար մասները կը մատնէին : Շիք՝ բառին jusqu au cou նշանակութեամբ :

2. Գլխարկներ , որոնք Շքիկը , և կամ Բառեն ուշքամ կընէին գողցես , այնքան գեղեցիկ և ճաշակաւոր զորս կրողներուն մէջ շատերուն ցուրտ տգեղութիւնը ըլլացած էին իրենց ծոռով և զարդերով :

3. Տէքօլթէներ , կուրծք , կռնակ , պարզ թիւերով և մուսլին տը սուաներով ծածկուած , որոնց տակ երեկոյեան զովութենէն ասղնտուող բէմպէզար մարմինները , ամառ օրով հոտած հաւկիթ ուտելու պէս սիրտ կը խառնըցնէին :

4. Միւսիւներ , բոլորն ալ endimanché փողկապներու concours մը ըրած էին կարծես չիք , ալա չիք չիքա չիք , որոնք իրենց քեռթուած մաքուր դէմքերով քար կը հանէին վէլօլու մատմազէներու . . . :

5. Պզտիկ 6-10 տարու տղաքներ , որոնք ամէնէն աւելի ուշս գրաւեցին իրենց կոկիկ հագուստով և մաքուր տեսքով :

6. Բառամաններ , ախ հաւատացէք հոգի կուտամ , մաքուր ինչ մեղքս պահեմ մաքուր բառամաններու : Չար բաղդիս , չորս դիս կը վխտային անոնք իրենց ճեպ ճերմակ գողցնոցներով , պօնէներով և որոնց լաւ գիտեմ թէ ամուսինները , կամ նաւաւար են և կամ այգեգործ մուրտ կատուներ , մինչդեռ անոնք , այսինքն իրենց կիները հոս տան փիսիկներ եղած են կերուխումէն , կարմիր կարմիր երեսներով , որոնց ախր կը քաշեն մատամները հաւատքիս պէս գիտեմ il fant le dire !

Հիմա ժամը տասերկուքն է : Հոն ծովուն վրայ նաւակները զիրար կը դիմաւորեն , որոնց մէջ անպատճառ մատմազէլ մը կայ թիւաւարող : Ախ . . . ինչ անուշ է օրիորդէ մը քշուող նաւակին մէջ ըլլալ : Հաւատացէք թէ այդ բոլոր մակոյկները երջանիկ էին , ինչպէս նաեւ մէջը նստողները : Այն փափուկ թաթիկներուն մէջ երերցող թեւձակները ըլլալ ուղեցի պահ մը օրիորդի մը քարոհանքներուն նշաւակ :

Վերը պարտէզին մէջ պիւռայի գաւաթները յաջորդաբար կը պարպուին ու ալ էթիքէթը իր adieuն կը դնէ . վէլօները վեր , գլխարկներու վրայ կը բարձրանան , ձեռնոցները կ'արձակեն կաթնաբոյր մատիկները , աչքերը կը վառլտկին , կը պլպլան , ստամոքսները կ'ուռին տեղի տալով քօռսէներու չաթըռուքին , ինչպէս նաեւ ճերմակ մետաքս պլուզներու կարերուն բըթըռուքին :

Ես իմ կարգիս քաշուած ծառի մը տակ , կէս խմուկ գարեջուրի գաւաթէս կըսպասեմ մխիթարականը իմ մենակեացի , ամուրի կեանքիս դառնութիւններուն , որ սակայն մարմարի պէս պաղ , ձուկի պէս յամր կը կենայ սեղանիս վրայ , զբաղած մարելու իր բնական պղպջակները , որոնց ախր կը քաշեն ծակ աչք ճանճերը :

Ու կը մտածեմ :

Ես ալ այդ ճանճիկներուն պէս եկած թառած եմ կանացի en bloc գաւաթին շուրջ , կը բզզամ , կը տղզամ , բայց անօգուտ , ու չեմ համարձակիր մօտենալ՝ վախճալով առնական թաթէն , որ անշուշտ պիտի ճըզմէ զիս իր մատներովը :

Մութը տակաւ իր ու քօղը կը ծածկէ չորս դին : Ծովուն ջուրերը ճըլը ճըլը կուգան համբուրել քարափին պատերը , ի յարգանս գեղեցիկ սեռին , որոնք քիչ մը հեռուն նստած են ու կը դիտեն Լապտերները կը վառին , ինչպէս նաեւ ներկայ սիրտերը : Բերացի ընտանիքներ , վառ տպաւորութեան մը տակ բարձրագոյ պոռհահայով մը կը մեկնին իրենց յատուկ կառքերով ու՝

— Բոսօքինիմաթա թօն քիւիօն . . .

— Էլա նասէ ֆիլիսօ եօքամու . . .

— Հիէռէթէ մատմազէլ . . .

— Սաս բառագալուսա . . . ները գիշերասկիզբի հանդարտ լուսթիւնը կը խզեն . կառքերը ահագին աղմուկով կը սուրան դէպի Առնաւոլուտ գիւղի ծովեզրը : Պիսիքլէթներ իրենց սուր պառթ պառթներով կը թռին կառքերու մէջտեղէն , մակոյկները տակաւ կը քաշուին , ու ես կը սոսկամ մինակութեան ներկայ տեսարանէն :

Հեռուէն Շիրքէթի վերջին շոգենաւը , տօգոյն ջուրերը փրփրելով կը սահի կանցնի :

իր ելեգարական կտուցները ցոլացնելով վէտ վէտ ալիքներուն վրայ, մինչ ես չորս գաւաթ պիւռայի հեշտօրօր ազդեցութեան տակ կը թողում աթոռս ու կը սկսիմ քալել, Թափառական Հրեային պէս, տարտամ ու աննպատակ անորոշ քայլերով :

Ու հեռուէն՝ նուագածուաց խումբը, թերեւս ի պատիւ պարտէզին վարձակալին, որ նոյն ատեն կառսօններու մառքաները կը հաշուէր, Իվանովիչի մինչօր մէկ վաւսը կը զարնէր անուշ շեշտերով :

Ջերմապէս կը յանձնարարեմ Պէպէթի պարտէզը ամէն անոնց, որոնք . . . սիրտ ներանալէն համ կ'առնեն :

Վ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԾՄ ՓԱՓԱՔՍ

Մեծ ու փոքր, հարուստ, աղքատ, ամեն անձ, Քաղաքացիք ու գիւղացիք անխնայ, Ունին իրենց փափաք, բաղձանք ու նախանձ, Ջայն պըսակել ջանան՝ օրհին անձանձիր :

Այսպէս եւ ես ունիմ այո՛ իմ փափաք, Յանկամ անեղօս նրման ըլլալ հայրիկիս, Որ քառասուն երկար ամեւ շարունակ, ձիգեւ քափեց, աշխատեցաւ, սիրելիս :

Ո՛վ Աստուած իմ, լըսե՛ ձայնիս՝ աղերսիս, Պարգեւե՛ ինձ իմաստութիւն, միտք արդար, Որ կարեմամբ դուր ու դադար տալ հայրիս Հեռեւելով անոր շաւղին՝ անդադար :

Պատեմ հայրս, ցանկամ որ շա՛տ ապրի նա, Մեմք ալ մընա՛նք իր քեւոց տակ իբր հաւու, Վիսե՛ ցաւե զերծ ու ազատ միտք մընա՛յ Վայելելով կեանք երջանիկ յանդորրու :

ՄԻՄՈՆ Հ. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՊՈՒՊՐԻԿՆԵՐԸ

Առաջնորդութեամբ ՍԸՎԱՃԵԱՆ ԷՖԷՏԻԻ

Սկիւտար Իճատիէ Միհրան էֆէնտիի ղեկավարութեամբ Սեպտ. 3 Շաբաթ և Կիրակի գիշերները ժամը 2 1/2-ին արտասովոր ներկայացում, ընտանեկան ժամանցի համար :

Գինները խիստ չափաւոր, տղայոց կէս գին :

ԾԱՂԻԿ

ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՍԻ ՎԵՐԱԾՈՒԱՑ

Հաճոյքով կը ծանուցանենք թէ ԾԱՂԻԿ պատկերազարդ շաբաթաթերթը յառաջիկայ շաբթուանէ սկսեալ պիտի չրատարակուի իբր կանանց յատուկ հանդէս, խմբագրապետութեամբ ծանօթ գրագիրուհի Օր. Հայկանոյ Մառքի, որ թերթիս համակրելի աշխատակցուհին եղած էր :

Այս առթիւ աւելորդ կը համարինք ծանուցանել թէ՛ Վահան էֆ. Թօշիկեան որ թերթիս մէջ խմբագրութեան պաշտօն կը վարէր ցարդ, Ծաղիկի վարչութիւնը ստանձնած է :

Ջերմապէս յաջողութիւն կը մաղթենք այս փնտռուած գրական պակասը լրացնողներուն :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սելանիկ. — Գ. Յ. էֆ. Պիլէճիկէն մեզի շրամ չեն շրկած տակաւին՝ ինչպէս գրած էիք երկու ամիս առաջ :

Վառնա. — Հ. Բ. էֆ. Լուսթիւնն ալ չափ մը ունի, ինչո՞ւ մեր հաշիւները չէք շրկեր. Ատաբազար. — Ա. Փ. էֆ. հաճեցէք մասնաւորապէս խնդրած ընկալագիրին փոխարէքը մասնաւորապէս շրկել մեզ :

Նոյն. — (Գործակալութիւն) հաճեցէք մնացեալ հաշիւը շրկել ընդ փոյթ :

Անճու քեօյ. — Գէորգ էֆ. Փալատեան, Առաջին թիւէն ստացաք կարծեմ. ինչպէս նաեւ միւսները, հաճեցէք բաժնեգիրը շրկել մեզ մանտաքօթով կամ նամակատան փուլով :

Իսկ գալով մեր կարգ մը բաժանորդներուն, որոնց անունը մի առ մի գրելու համար յատուկ և բացառիկ թերթ մը հրատարակել պէտք է, կը խնդրենք, կ'աղաչենք որ քիչ մը խիղճ ունենան իրենց հաշիւը կարգադրելու մէջ : Երեք ամիս ԶՐԻ թերթ պիտի շրկենք այն ճշդապահ և խղճամիտ բաժանորդին որ հաճի մանտաքօթին երեսը ցուցնել մեզ, զոր ջուրերու պէս կարօտցած ենք երկու ամիսէ ի վեր :

ԻՆՉ Կ'ԸՍԷ ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ

140,000 անգամ ըսած ու կրկնած եւ՝
թէ՛ բերանացի և թէ՛ այս սիւնակներուն մէջ
թէ՛ « պէտք չէ երկու ջափահաս աղջիկներ
առանձին ձգել » : Իմ այս արդար խրատա-
կանս ծնողաց հանդէպ, նախանաւանդ ՄԱՅ-
ՐԵՐու հասցէին ուղղած էի սա անորոշ խո-
սուկերով թէ՛ անոնք խօսքս պիտի բռնէին
Մեծպահքի չորեքշաբթիին և ուրբաթին
պէս ամուր և հաւատով, սակայն ցաւով կը
յիշեմ թէ՛ ո՛չ մէկ աղջիկ զաւկի տէր մայր
նկատի առաւ խրատս : Tanpis :

Շատ անգամ կը պատահէ որ երբ ընտա-
նիք մը ուրիշ ընտանիքի մը հիւր երթայ
(քիչ մը նազիկցնելով) վիզիթա տայ, տա-
րեց կիները կ'ուզեն որ իրենց չափահաս աղ-
ջիկները զատ նստին ուրիշ սենեկի մը մէջ,
ու իրենք առանձին մնան, որպէս զի ազատ
համարձակ կարենան խօսիլ իրենց հասուկ-
ներուն ամուսնութեան վրայօք, առանց
մտածելու սա անազին ճշմարտութեան վրայ
թէ՛ նոյն իսկ անոնք, այսինքն աղջիկները
աւելի ընդարձակ և առողջ գաղափարներ
ունին, որոնց քով ասդիկներուն մզլոտած
կարծիքները, դատողութիւնները, ձախա-
կողման գէւօ կը մնան :

Մանչ զաւակ մը, իր մէկ մտերիմ ընկե-
րով հետ տարիներով ալ տեսակցի վտանգ
մը չյուսացուիր, բայց՝ երբ երկու խելահաս
և հասուկ տատրակներ մէկ երկու ժամ կը-
տուց կտուցի տան, անպատճառ զիրար կը
համոզեն ու վարպետ գտնուողը դիմացինը
իր գաղափարներովը կը խմորէ :

« Վայ կլխուդ » պիտի ըսեն հիմա,
հաւատքիս պէս գիտեմ, ամէն անոնք, որոնք
պիտի կարդան իմ այս տողերս և ասանկով իբր
թէ՛ աչքբացութիւն և իրենց մայրական
պարտականութեան գիտակցութիւնը պիտի
ջատագոյնեն, սակայն ամէն ամէն ասեմ ձեզ,
եթէ մեռնիմ իսկ, այս տողերս կենդանի
խրատականը և անոր ճշդութեան վաւերա-
ցումը թող ըլլայ՝ « պէտք չէ երկու ջափա-
հաս աղջիկներ առանձին ձգել » :

* *

Օրը Շաբաթ է : Տիկին Նարթիկ իր հա-
սուկ աղջկանը հետ սալօնին մէջ քանարէ-
ներուն վրայի ծածկոյները կը ժողվէ, փո-
շիները կ'առնուին, պատուհանները կը բաց-
ուին, վերջապէս կը պատրաստուին ընդու-
նիլ օր առաջ լուր դրկուած ընտանիք մը :

Ժամը ութին մօտ դուռը կը զարնուի, և
անա տիկին Սուրբիկ և աղջիկը հօժէն ներս
կը մտնան, ու կըսկսի պաշիկի գիրկ-
ընդխառնութիւնը, չաք, շուք, չաքու շու-
քու, (հոս տեղն է ըսել որ վարպետ կիներ
և օրիորդներ շատ միմտիս կը պագտուին,
խնայելով քսուքուտուած բուտանները, այն-
պէս որ, թէև չաք, շուք ձայն մը կը լսուի,
սակայն շրթունքնին լորցունքով չեն թըր-
ջեր . . .) :

Պագտուելու և զիրար գրկելու ծուրիկ
ու կանացի արարողութենէն վերջ, վեր
կելլան սալօնը ու պահ մը փայտէ խամա-
ճիկներու պէս « ինչպէս էք » ներու գլուխ ձօ-
ճելէ վերջ, խօսակցութիւնը կըսկսի :

— Խըյանէթ քեզի բան մը ըսեր էի . . .
(այս ըսած ժամանակ աչքերը կը բանայ
Սուրբիկ և անոնց պոչով ալ աղջիկները կը
ցուցնէ, որոնք դեռ ձեռք ձեռքի քիթ քի-
թի կը փսրտային քանարէին անկիւնը) :

— Հա՛, հասկցա՛յ . . . հայտէ աղջիկ-
ներ չի նեղուիք, կուզէ՞ք նէ դիմացի օտան
գացէք, սերին է, չէնէ պախճան ինջէք . . .
հայտէ Ծիլօմէն, հօժէնին ա՛ռ տէ պտտցուր,
չնեղուի աղջիկը . . .

Ելեկտրական հոսանքէ մը քշուածի պէս
զոյգ տատրակները տեղերնուն կը ցատկեն
և արդէն ուրիշ բանի չէին սպասեր, և եր-
կուքը մէկ թեւթեւի, թիթեւնիկի մը չափ
թեթեւ դուրս կելլան սալօնէն ու հազիւ
առանձին կը մնան դուռը սրահը, կրկին կը
փաթթուին ու պաշիկներու — այս անգամ
սուլու և սրտանց պաշիկներու — չաքսու-
քը կըսկսի :

— Ախ հոգիս, ջուրերու պէս կարօտցեր
էի . . .

— Ախ անուշս հապա ես, ամէն գիշեր անկողին մտնալուս, կըսէի քի, ախ Աստուածս, էօթէնս երազս բեր տէ, պարէ հոն տեսնամ տէյի (պաշիկները կը շարունակուին) :

— Պարտէ՞զ ելլանք, չէնէ մի դիմացի սենեակը երթանք . . .

— Խուշս, մինակ ըլլանք տէ, ո՛ւր ըլլայ նէ ըլլայ, ինտոր կուգես նէ . . .

— Շատ աղէկ հոգիս պարտէզ ինջնանք ծառին տակը շուք է (սանդուխին գլուխը նորէն պաշիկ) :

— Աս ինտոր գէրցեր ես հոգիս, կըսէ էօթէն թեւերը Ֆիլօմէնին մէջքը անցնելով, նայէ՛, ես օր օրի կը հալիմ կոր . . .

— Մարմինիս մի՛ նայիր խուշս, սիրտս մազէն ալ բարակցած է, դուն գիտես արդէն վիճակս . . .

— Դուն ատանկ ըսես նէ, ես ի՞նչ ըսելու եմ, աշխարհքիս վրայ դժբաղդ աղջիկ մը կայ նէ ան ալ ես եմ . . .

Երկուքը մէկ աթոռներու վրայ կը նստին ծառի մը շուքին տակ ու ալ խօսակցութիւնը լիաշոգի կընթանայ :

— Գիտե՞ս, ինչե՛ր ինչե՛ր անցաւ գլխէս էօթէնիս . . . քաշածներս մինակ Աստուածս գիտէ, կենդանի մեռելի մը պէս կապրիմ կոր ու բան մը աչքիս չերեւար հիմա, ոչ հագուած ունիմ, ոչ դուրս կելլամ, կերածըս ալ չի մարելու չափ բան մը . . . ըսաւ Ֆիլօմէն, ամուր մը իր ընկերուհւոյն ձեռքը սեղմելով,

— Ինչո՞ւ . . . խեր ըլլայ . . . ի՞նչ պատահեցաւ, առջի փոթորիկը գիտե՛մ . . . անկէ վերջը . . .

— Ախ հոգիս, մի հաւատար երբ ըսեն թէ ծնողք ըսուածը կը սիրէ, կը գուրգուրայ իր զաւկին վրայ . . . գիտցիր որ աղջիկնութեան մէջ մինչեւ որ կարգուիս, էն գլխաւոր թշնամիներդ անոնք են, ծնողներդ . . .

— Երդում մընէր խուշս, կը հաւատամ . . . մէկ ծարն ալ գլոխս է . . . հէյ . . .

— Նայէ — ձեռքը կուրծքին դնելով — չաթըն չաթըն նետել պաշլայեց, մէկը չուներ որ խօսիմ, ներսիդիս պարպեմ, պաղըզկիմ, պաղի գիշերները սենեակս կը քաշ-

ուիմ, կուլամ, երկինքն ի վեր, մինչեւ որ քուրը յաղթէ ու անկողին իյնամ . . .

— Խըյանէթ, գիտես քի ես ալ մինակ եմ, ելիր ինծի եկուր . . . թօհաֆ ես . . .

— Նայէ քի ըսեմ, — այս միջոցին երկուքը մէկ տանը պատուհաններուն կը նային — մեզի մէկը չի տեսնար չի լսե՞ր ես . . .

— Չէ խուշս հոգդ մընէր, մինակ ենք, ուզածիդ պէս կընաս խօսիլ,

— Սա գիտես Լեւոնը կար, սա ուր է Գաբրիէլ աղային սուլառէին գիշերը . . . գիտես իշտէ . . .

— Հա՛ հա՛, սա քէօշէյի բերնի տունին Լեւոնիկը . . .

— Իշտէ ատ տղան, ատ օրուրնէ պէրի մեր փողոցը ճամբայ էր ըրեր, կասնէր կը դառնար կոր, էյ դուն ալ մարդ ես աղջիկ ես գանուէր նէ, չէնք շնորհք տղայ, բանը գործը տեղը, աղուոր, տունի տէր, չե՛ս ուշմիշ ըլլար հետը . . . որ տարիիս պիտի պէքլէյեմ . . . խօսքը մէջերնիս, օրը հինգ տասը հատ ճերմակ մազ կը փեթթեմ կոր գլոխէս . . .

— Բովս եկուր . . . նա՛ թութամ թութամ . . .

— Իշտէ բէնճիրէէն, աչք իքլի, խնդալ ֆիլան ըսելնիքէն, կէօյամ քի վարդի աշ պիտի առնէ տէյի, լակոտը նսաըլ եղաւ կիրակի առտու մը չաթ չաթ տուն չիգա՞յ մի՛ . . .

— Է՛ . . . Է՛ . . . Է՛ . . . յ . . .

— Հա՛ . . . մայրս վարն է եղեր դուռը բացէր, նէ իսէ հրամանեցէք ըսելէն չիտակ պարտէզ տարեր է, ան ալ վարդերը կըտրելու ըլլայ, ես ալ վար իջայ ասդիէն անդիէն խօսք ըսելն իքէն, ինծի կուգայ քի մարըս կուհեց խնդիրը, նա՛ սուլաթ, Տըղան ելաւ դնաց ամա երթալն իքէն ձեռքս ամուր մը սեղմեց, էյ խաչոր գիտեմ քի ատ թաքիքէին կուսակս ի վար տաք տաք ջուր մը թափեցին, մէյեր աս ի՞նչ անուշ բան է եղեր էրիկմարդու ծառք սըլսմելը . . .

— Էրնէկ վրադ Ֆիլօմէնս, նայիմ ո՞ր ծառքդ էր (ու կըսկսի այդ ձեռքը իրէնին մէջ չփել . . .) :

— Իշտէ ատ օրէն պէրի հետս թուռլի մըն է մարս, հարս ըսես նէ հետս չիֆթ մը

լախըռտը ըրած չունի, տուներնիս պախուռ-
չի եռվա դառյալ . . .

— Էյ տղան կը տեսնաս կոր հիմա . . .

— Հապա' . . . հէմ . . . գիտես եա քե-
նէ բան չեմ պահեմ, (բէշը վեր առնելով
գրպանէն ճրմըթկած նամակ մը կը հանէ)
առջի գիշեր էզաճիւրն չըրախը բերաւ, կար-
դամ տէ մտիկ ըրէ . . .

— Կեցիր հոգիս մէյմը ներս երթամ,
խախվէնին եփեմ քիթերնուն տամ տէ հիմա
կուգամ, ըսելով ներս կ'երթայ ուրախու-
թենէն գինովցած, մինչ վերը արդէն երկու
մայր դէմ դէմի այս խնդիրը կը ծեծէին.
դժբաղդաբար չպիտի կրնանք անոնց
խօսակցութիւնը դնել հոս, տեղի անձկու-
թեան պատճառաւ .

Ինչ վերջը խենդի պէս ցատկուտելով կը
հասնի Էօթէնի .

— Հայտէ, անոնք խօսքի տալիս են ե-
ղեր, դուն սա նամակը կարդայ, խելքիս
պիտի գայ . . .

— Նայէ ի՞նչ անուշիկ տղայ է եղէր քի...
հիմա պիտի հասկընաս եա' . . .

Ու կ'սկսի կարդալ ցած ձայնով,

« Սրտիս հատորը,

— Ի՞նչ, կը հարցնէ Էօթէնի, ուրախու-
թենէն բերանը բաց ու երեսուն երկու ակ-
ռաները մէջ տեղ .

— Սրտիս հատորը, սանքի սիրտիս մէկ
կտորը ըսել կ'ուզէ . . .

— Էյ աֆէրիմ տղայ . . . քեզի բան մը
ըսեմ, իրաւ քեզի կը սիրէ կոր եղեր» կ'ըսէ
Էօթէնի, Ֆիլոմէնի ծունգը շոյելով .

— Նայէ տահա ինչե՞ր գրեր է, ու կը
շարունակէ իր ընթերցումը .

« Կեանքիս օրերուն մէջ էն երջանիկը
պիտի սեպեմ այն օրը, երբ կարենամ, և
կամ յաջողիմ զքեզ կոչել տիկին Լեւոն
Թահթապօչեան » .

— Մականունը Թահթապօչեան է եղեր...
չօգ չէ՞յ . . . ի՞նչ էնէ կարդա նայինք . . .

« Ուրիշ կարգ մը նորելուկ երիտասարդ-
ներուն պէս չեմ ուզեր վաղանցուկ յոյսե-
րով ժամանակ անցընել, այլ օր, ժամ առաջ
կ'ուզեմ հասնիլ նպատակիս, որ է, ինչպէս
ըսի, ամուսնանալ ու կապուիլ հրամանաւն
Աստուծոյ » .

— Էյ հայտէ' . . . շատ խըյանէթութիւն

է ըրածնին, տղան չէնք չնորհք կարգուե-
լու միտքը կը բացատրէ կոր, տահա' ի՞նչ
ըրէ . . .

« Եթէ հաւանութիւն տաս, կանոնաւո-
րապէս մեր տաներէց քահանան պիտի ղըր-
կեմ ձեռքդ խնդրելու, և կարծեմ ո' ե է
դժուարութիւն չպիտի յարուցանեն ծնողքդ
այս մասին .

« Վաղը երեկոյ պատասխանիդ կըսպա-
սեմ, և կը յուսամ թէ չպիտի մերժես ա-
ռաջարկս, եթէ ամուսնանալու փափաք ու-
նիս, և թէ կուզես երջանիկ ըլլալ կեան-
քիդ մնացեալ օրերուն մէջ . . .

Իոյդ սիրով

Լ. Թահթապօչեան»

— Կեցիր . . . ատտեղը ըստեկելիք բան
մը կայ, Ֆառդին գացիր աճապա . . .

— Ի՞նչ բան խուչս, իշտէ տիւզճէ կը
հասկցունէ կոր քի, հա', չէ պատասխան
մը տուր տէյի . . .

— Չէ' . . . նայէ սա վերջին տողերը
մէյ մըն ա' կարդայ . . . նայէ կըսէ կոր քի
կեանքիդ մնացեալ օրերուն մէջը տէյի,
սանքի տարիքդ եկած լեցած է ըսել կուզէ
կոր, չե՞ս հասկնար կոր . . . հա' . . . պուն-
տա իշ վար . . .

— Չեմ կարծեր որ ատ միտքին ըսած
ըլլայ, որովհետեւ չափազանց կը սիրէ կոր
գիտեմ, և այսչափ սիրող մէկը տարիքը չի
նայիր . . .

— Ի՞նչ է նէ, դուն հարկաւ ինէ աղէկ
կը մտածես, հոգիս, էյ . . . ատոր ի՞նչ պա-
տասխան տուիր . . .

— Կեցիր քի ըսեմ, աս նամակը կար-
դալուս պէս հէմէն ճէպս կոխեցի, մարս տե-
սաւ քի աճէլէ բան մը ճէպս դրի տէյի . . .
իրիկուան դէմ դուրս պիտի ելլայինք, սե-
նեակս կը հագուէի կոր, ինտոր եղեր է, հա-
նուելնիքէն ձգեր եմ . . . մայրս գտեր կար-
դացեր է, մէյմընալ նայիմ, կրակ է կտրեր,
տունը գլուխս փլցուց, նամակը երեսիս նե-
տեց, չորս օր հետս քէն ըրաւ, բայց հայ-
րիկիս չըսաւ, իշտէ այս աղէկութիւնը ը-
րաւ : Հիմա կ'ըսէ կոր քի սատկիս նէ չեմ
կարգեր տէյի . . .

— Հա' . . . հիմա ինծի մտիկ ըրէ, գի-
տես եա ես քեզի խրատ տուող չեմ ամա,
քիշ շատ իմ գլոխէս ալ տաքը պաղը ան-

ցած է : Գիտցիր որ քեզի չի կարգելնուն մինակ պատճառը տալիք փարանուն համար է , երկրորդ , ճէհէզը քի ընդ ամէնը չորս հինգ հարուր ոսկիի կը նայի , երրորդ , քեզի հարս տալու ըլլան նէ տունին մէջը պէսլէմէ մը պիտի բռնեն , ամա հիմա դուն կաս , կ'ընես կըլլաս կոր : Երրորդ , տունփեսայ առնեն նէ , ամուսինիդ պողպղը պիտի նային որ ծախքի դուռ է : Չորրորդ , քենէ ծնելիք պղտիկները գլխու ցաւ պիտի ըլլան մայրիկիդ ու տունը չորպարի պէս պիտի ըլլայ , անոր աղէկը չեն կարգեր , աս բաներէն ալ կ'ազատին , իշտէ իմ կարճ խելքովս ասանկ կը գտնամ կոր , հէմ ալ անանկ է . . .

— Իրաւ ես արդեօք խուշս , էյ հիմա ես ինչ ընեմ , ինչ ճամբայ բռնեմ ասոնց դէմը . . .

— Հա՛ . . . ինծի քոյր կը ճանչնաս . . .

— Կը տարակուսիս հոգիս (չաբուռ չուրուռ պաշիկներ կը փոխանակուին) :

— Կը հաւատաս թէ քու աղէկութիւնդ , երջանկութիւնդ կ'ուզեմ . . .

— Հաւատքիս պէս (պաշիկները կը շարունակուին) :

— Ինչ ըսեմ նէ պիտի ընեմ . . .

— Կ'երդնում էօթէնիս , կ'երդնում (նորէն պաշիկ) :

— Անանկ է նէ մտիկ ըրէ : Հիմա դուն այս իրիկունն համակ մը գրէ Լեւոնին , անոր հասկցուր քի , դուն կուզես կոր ամա ծնողքդ չեն ձգեր կոր տէյի , հէմ ալ իրեն հետ Ռանտիլու մը տուր , կիրակի օրերը դպրոցը մարդ չիգայ , ամուսինն ձեռքը քառորդ մը տուր սուս կ'ըլլայ , հոն կ'երթաս , ան ալ կուգայ կը տեսնուիք :

— Իմանան նէ . . .

— Ո՛վ պիտի իմանայ , մի վախար , մարդ ֆառդին չերթար : Անկէ ետքը տղուն կ'ըսես քի , իմ սիրտս քեզի հետ է , ո՛ր ըսես նէ կուգամ , բայց եթէ օրինաւոր ամուսնութեամբ , այսինքն ծնողացս հաւանութեամբ ընես նէ չըլլար , դուն ինծի կուգաս գիշեր մը կ'առնես կը փախցունես , ես ալ կուգամ , վերջէն անոնք ուզեն չուզեն մեզ կը կանչեն կը պսակեն :

— Վո՛ւյ . . . ա՛լ մի խօսիր հոգիս , վրաս փուշ փուշ եղաւ , ադ չպիտի կրնամ ընել . . . վո՛ւյ . . . կը սոսկամ . . .

— Իշտէ խուշս , սոսկալով սոսկալով , մենք ալ սոսկում վիճակի հասանք , մաղերնուս մէջը ձերմակ ինկաւ , ոսկոր տէրի մնացինք և դեռ կ'ըսես թէ կը սոսկամ . . . ասկէ վերջը ծնողքէ յոյս չկայ , մենք մեզի պէճէրուինք նէ աղէկ , չէ նէ մեռելունս գլոխը պիտի կարդան նշանաւոր , որ լէմոնի ծաղիկներով պէտք էր որ լսէինք . . .

— Իրաւունք ունիս հոգիս , բայց . . .

— Բայցը մայցը չիկայ , աս աս է , ինէ զատ մէկը քեզի ասանկ բարեկամական խրատ չի տար . հի՛չ մի սեպեր անոնք , տղուն հետ գործդ եփէ լմնաց զնաց . . .

— Մ'ըսեր հոգիս , վերջէն դժբաղդ կ'ըլլամ . . . սպասենք էօթէնիս , սպասենք , կարելի է ծնողացս սիրտը կ'ըլլայ . . .

— Ը՛նհ . . . անճարակ , հաւատա որ , եթէ ես սիրէի սա տղան՝ մինչեւ հիմա թուռն տէր եղած էի : Նայէ մաղերնուս մէջը ձերմակ ինկաւ , երեսներնիս մուշմուլա կը դառնայ կոր , մէկը մեր երեսը չնայիր կոր . պախալին չըրախը պիլէ անցած օր ինծի «պիր շէյ իսթէ՛ր մի , տուտու . . .» ըսաւ , ալ աս վիճակնուս մէջ դեռ կը սպասես որ անոնց կամքը ըլլայ . . .

— Կեցիր նայինք ինտո՛ր ըսիր , դպրոցը պարապ է , հոն երթանք խօսքերնիս կապենք . . . ես բռնուինք նէ . . .

— Ձեռնոց դնող կատուն մուկ չկրնար բռնել . . . հասկցար , փէշերդ սոթտէ և գործի սկսէ , հասկցար . . . հա՛ իշտէ քոյրդ ըլլանայ նէ ասանկ խրատ չկրնար տալ :

* * *

Այո՛ , իրաւ է օրիորդին ըսածը , քոյր մը չկրնար տալ այն չար ու զազիր խրատները որոնք կը կրկնուին երկու մտերիմ բարեկամուհիներու միջեւ : Ահա ինչու կ'ըսեմ ու կը կրկնեմ թէ՛ պէտք է չափազանց զգուշութիւն ընել երկու չափահաս օրիորդներու tête à têteին , որովհետեւ անոնք երբ իրար գան , ոչ Ռուսեւճարոն պատերազմին վրայ կը խօսին և ոչ ալ Սկիւտարի երեք թաղերու միացման խնդրով կը զբաղին , այլ իրենց է՛ն սիրական causerieն ամուսնութեան հարցն է , երիտասարդներու ընտրութիւնը , վերջապէս խօսակցութիւն մը որ իրենց զգացումները կը խտխտացնէ և ուրկէ չափազանց կ'ախորժին անոնք , կը հըրճուին :

Մեր աղջիկները երբ առանձին դատենք , գովելի յատկութիւններով օժտուած ըլլալնին պէտք է խոստովանինք , բայց երբ երկու երեկտրական հոսանքները իրար գան , օ՛ . . . այն ատեն կը բռնկին , կը վառին և արդիւնքը փճացումը կ'ըլլայ իրենց կոյս մաքրութեան և անսրտաւ կեանքին :

Մի՛ ձգէք որ երկու չափահաս օրիորդներ գլուխ գլխի տան ձեր տուններուն մէջ , թէ՛ անոնք քոյքի օրինակ հանելու համար կ'առանձնանան , սակայն չարին օրինակը կը սովորին քիթ քիթ և հետեւանքը կ'ըլլայ խախտութիւն և անամնացութիւն :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

[9]

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՀՐԱՇԱԼԻ ԶՐՈՅՑՆԵՐ

Երբ կին մը ճամբան մօլորած ըլլայ, այդ գազանները կը յարձակին անոնց վրայ և կը տանին եղեր անտառին ամենախիտ վայրը, ինչպէս կը պատմեն այս բնիկները, որոնց երեւակայութիւնը չափ ու սահման չունի։ Այս խեղճ կիները կը ստիպուին իբր ընկեր ծառայել այդ հաւելի գազաններուն։ Ամբողջ օրը անոնք կորեկ կը ծեծեն և եզրպտացորեն կը փրցնեն անոնց կերակուրը պատրաստելու համար, որովհետեւ մեր պարոն կապիկները համ կը զգան աւելի այս անունդներէն, քան վայրի խոտերէն և ոլտուղներէն, որոնց կը հանդիպին անտառին մէջ։

Այս կիներէն անոնք որ փորձին փախչիլ, վայրկենաբար կտոր կտոր եղած են։ Ասոր համար է որ, կը հաւաստեն բնիկ պատմիչները անտեղիտալի վստահութիւնով, անոնցմէ և ոչ մէկը կրցած է վերադառնալ։

Ներկաները սկսան իրենց յիշատակները քաղել այդ կորիւններուն վրայ։ Մէկը տեսած էր ասոնցմէ խումբ մը որ շաքարեղէգներ կը քաղէր և խուրձ կը կապէր, այնքան արուեստով որքան մարդիկ չպիտի կրնային ընել։ Ինք պահուելու էր որպէս զի չտեսնուի երբ մահը ստոյգ էր։ Երբ հունձքը վերջացած էր, ամէն անասուն իր ուսին վրայ առած էր երկու կամ երեք խուրձ և յետոյ մեկնած էին, ոռնումներ արձակելով, որոնք անտառը կը թնդացնէին և գազանները կը փախցնէին։

Ուրիշ մը յայտնեց թէ յաճախ չար մարդիկ, նոյն իսկ չմեռած, կորիւններու կը փոխուին։ Այս առթիւ մէկը հետեւեալը պատմեց։

— Դրացիներէս Նամպէ անուն մէկը որ կախարդներուն բարկութեան ենթարկուած էր, առտու մը երբ տունէն անտառ կ'երթար, ճամբան հանդիպեցաւ փշալից ճկենի-

ներու, որոնք տարօրինակ եղանակով մը իրար խառնուած էին։ Չայն մէկ կողմ ըրաւ, առանց ուշադրութիւն դարձնելու, հակառակ դիտողութիւններու՝ որ իրեն կ'ընկերանայի։ Դանի մը քայլ անդին ուրիշ դէպք մը պատահեցաւ։ Յանկարծ ճամբուն վրայ երկու սատկած օձեր տեսանք, որոնք խաչաձեւ իրարու վրայ փռուած էին։ Ասոր ալ կարեւորութիւն չտուաւ։ Անտառ մտնելուն սե անգղի մը դիակը գտաւ և սակայն մարդը շարունակեց իր ճամբան, հակառակ իմ վերջին մէկ ազդարարութեանս։ Հասանք վերջապէս վայրի թփիներու դաշտ մը զոր ժամանակ մը առաջ գտած էինք ճահիճի մը մօտ։ Իրիկունը երբ կը վերադառնայինք, ուշ մնացած էինք, յանկարծակի եկանք անտառին խորը։ Նամպէ սկսաւ այն ատեն գրգռման տարօրինակ նշաններ ցոյց տալ, յետոյ, լուսինին առաջին ճառագայթներուն հետ, ի մեծ սարսափումս ինծի, ըսկըսաւ անկապ ճիչեր արձակել, որոնք կամաց կամաց ոռնումի փոխուեցան, և ցորչափ իր ձայնը կը փոխուէր, մարմինն ալ կ'ալլափոխուէր, և վերջապէս կորիւն երեւոյթ մը առաւ։ Գամուած մնացի հոն, և ան ինծի տեսնալով սարսափահար, ալ աւելի ահարկու կաղկանձիւն մը արձակեց և փախաւ անտառին խորը։ Ա'լ չտեսանք զայն...

Ահաւասիկ այս է մտքի վիճակը և նկարագիրը Ափրիկէի այս մասերու բնիկներուն, նման ամէն այն ժողովուրդներուն, որոնք մանկութեան մէջ կը գտնուին և իմացակաշնութիւն մը ունին որ ոեւէ դաստիարակութեամբ զարգացած չէ։

Ճամբորդները հետեւաբար պէտք է վերապահութեամբ ընդունին, միշտ յիշելով թէ երկու դէպքերուն մէջէն, մէկը պարզ և որոշ և միւսը հրաշապատում, բնիկը միշտ վերջինին է որ նախապատուութիւ

պիտի տայ ձեզի ուսումնական համար, ո՛չ թէ խաբելու պէտքէն դրդուած, այլ որովհետեւ իր միտքը սովորաբար աւելի ենթակայ է հրաշալի և տարօրինակ իրերու քան բնական, պարզ բաներու:

Այս պատճառաւ ապարդիւն կը մնային իմ փորձերս ճշմարիտ տեղեկութիւններ ստանալու համար սա բնիկներէն, կորուլին բարձրերուն վրայ: Անոնք միշտ իրենց միտքի չափազանցութիւններուն կը դիմէին և միշտ կը խօսէին միւս հոգեդարձ կորուլներուն վրայ:

ԴԵՊԻ ՈՐՄԻ ԿԵԱՆՔ

Վերին Քոնկոյի, այսինքն Լօանկոյի բնիկները սաստիկ քնամոլներ են: Յորեկը տաք ժամերուն, կը քնանան չոր հողէ և պամպուէ իրենց տնակներուն մէջ, կամ տերեւուտքի մը տակ: Բայց երբ արեւը կը սկսի հակիլ հորիզոնին վրայ և զով սիւքը կը սկսի շոյել պանանիներու ճկուն ցողունները, այն ատեն բնիկները իրենց թմբիւրը կը թոթուեն, կը լուացուին, կը յարդարուին, մինչ կիներն ու գերիները իրիկուան ճաշը կը պատրաստեն. երբ իրենց ախորժակը գոհացած է, կ'երթան պտտիլ գիւղերու փողոցները, քանի մը երգեր մուտաւով, Բիչ քիչ խումբեր կը կազմուին, ամէնքը իր սիկառը ունի՝ եգիպտացորենի տերեւներու մէջ պլորուած և անվերջ խօսակցութիւն մը կը սկսի, որոնց մէջ գլխաւոր տեղը կը բռնեն հոգեդարձ և կամ ալլափոխուած կորուլին պատմութիւնները:

Իմ աշխատութիւններէս յոգնած և գիշերուան զովութենէն թուլցած, ծածկոցի մը վրայ նետուեցայ հիւղակին մէջ զոր յատկապէս պատրաստել տուած էր ինծի համար գիւղապետը: Անմիջապէս քնացայ բնիկներուն պատմութեան անվերջ մրմունջներուն օրօրին մէջ:

Առտուն հագիւ կը ծագէր երբ Նօթուէ արթնցուց զիս: Աման մը սուրճ խմեցի անմիջապէս, զոր պատրաստած էր անոր կինը և ճամբայ ինկանք դէպի անտառ:

Աչքերնիս առածին չափ մեր առջեւ կը տարածուէր դաշտ մը, արմաւենիներու և ուրիշ ծառերու խմբումներով կէտկիտուած,

և եգիպտացորենի, քուրիմի և կորեկի արտերով: Խորը, կանանչ վէտվէտանքներու շուրջը, կը նշմարէինք կապտորակ երկար գիծի մը պէս ատամնաշար մը, անկանոն և խորտ ու բորդ, որ արեւին առաջին ճառագայթներուն տակ նրբութիւններ կ'առնէր: Առաջնորդնիս ըսաւ թէ թաւուս բլրակներու շրջան մըն է, վայրի փիղերու ու կորուլներու ապաստան մը, ուր կ'երթար ինք փղոսկրներ ձեռք բերելու:

Ինծի կ'առաջնորդէր դէպի որսի երկիր մը որ իրեն ընտանի էր: Հիւսիս արեւելեան ուղղութեամբ կը քալէինք և որչափ որ կրնայի որոշել աչքով, շուրջ 50 մղոն հեռու էինք մեր տեսած ամէնէն բարձր կատարէն:

Այս բլուրները չեղումները ըլլալու էին այն լեռնաշղթաներուն որոնք կեդրոնական կուրիային սկսելով կ'երկարին մինչեւ Քար հրուանդան, առանց ծովեզրէն հեռանալու, առ առաւելն 100-150 մղոն:

Առտուն առաջին ժամերուն մէջ արիկեան գիւղանկարներէն աւելի դեղնեցիկ, աւելի շքեղ բան տեսած չեմ: Նեղ արահետներէ կը քալէինք, որոնք հազիւ կոխոտուած էին որսորդներու և գերիներու մերկ ոտքերով, ոսկեզօծ և յորդ պտուղներով ծանրաբեռնուած պանանիներու և պզտիկ արմաւենիներու մէջէն: Ծառերուն ծերպերէն կը նշմարէինք, կանանչի երկար գօտիներ, որոնք մեր երկու կողմէն կը թաւալէին, գգուելով մեր նայուածքը թաւաշահիւս գորգերու պէս: Ասոնք մշակուած դաշտեր էին, որոնք այդ պահուն լեցուած էին գերիներով, որոնք, արեւածագէն շատ առաջ ելած, ոռոգման ուղիներ կը բանալին և փոքր բոյսեր կը անկէին, դանդաղ և միօրինակ երգերու աղմուկին մէջ, որոնք կարծես զանոնք կը խանդավառէին, իրենց շարժումները որոշելով անոնց աշխատութեան եղանակը:

(Շարունկանքի)

Արտագրուէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն ՀԻՉԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Գաւաթի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տուկունութեամբ եւ գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հաշուատներու, կանանց բէրրութիւններու եւ տղայոց չիք եւ դիմացկուն ֆօսփիւններու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հաշուատի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից .

Սալարկութիւն չկայ, թիւը 2 դրէ Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին .

50—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներն չեն նետեր, ջուրի եւ անձրեւի կը դիմանան, մուկները կը ջնջեն եւն. եւն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի եւ դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է սոյն գնեցող իր վերայ առնել ամէն գործ, թէ ներկն եւ թէ գործաւորողիքը մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան : — Գաւառները գործախաշնորհ պէտք կայ, դիւրամատչելի պայմաններով :

16—20

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹՍ.Գ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեսի գումար

31,008,000 Ժրանգ

ՀՐԳԵՀԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեսի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք եւ կարասիք :
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մադդեկային կանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չորհրաւի՝ եւ առադատմանուի վրայ :

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ


Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

عبدالله بن محمد
٢٠٩٥١٢٢



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻՖՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճեհ-ափու, Ճեյալ-Պեյ խան, քի. 10